



ԱՐՇԱՎ
ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Պրոֆեսոր Դ. Ի. ԶԻՄՈՆՏ

ԱԿԱՆՋԻ,
ԿՈԿՈՐԴԻ
ՅԵՎ ՔԹԻ


ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

1934

Ա. Զ. ՈՎ. - Ս. Կ. Մ. ՈՎ. ՅԱՆ
ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ





ԱԿԱՆՋԻ, ԿՈԿՈՐԴԻ ՅԵՎ ՔԹԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

616.21

A 468210

Г.П.Б. в ЛНГР

Ц. 1934 г.


ՀԵՂԻՆԱԿԻՑ

№ 426

Սորհրդային առողջապահությունը պայ-
հար է մղում հիվանդությունների պակա-
սեցման համար, վերականգնողական և կախ-
ված վոչ միայն աշխատավորների առող-
ջության պահպանումն, այլև աշխատանքի
արտադրողականության բարձրացումը:

Այդ պայքարը տարվում է աշխատանքի
պայմանների ու կենցաղի հիմնովին փոփոխ-
ման և բժշկական ոգնության կանոնավոր
զբաղման միջոցով:

Հիվանդությունների պակասեցման համար
մղվող այս պայքարում հատուկ դեր է խա-
ղում աշխատավորների միջով առողջապա-
հական գիտելիքների տարածումը:



Քաղաքի և գյուղի աշխատավորներին
ամենալայն մասսաներում անհրաժեշտ է
ծավալել գիտելիքներ այն մասին, թե ինչ-
պես են գործում մեր մարմնի գործարան-
ները, ինչից են առաջանում վարակիչ հի-
վանդուկթյունները և թե ինչպես է հարկա-
վոր նրանցից պաշտպանվել:

Այս գրքույկում բացատրվում են ամե-
նակարեվոր գիտելիքները շնչուղիների նշա-
նակուկթյան մասին մեր առողջուկթյան հա-
մար, ինչպես նաև քթի, կոկորդի ու ականջի
հիվանդուկթյունների պատճառների մասին.
բացատրվում են նմանապես այն միջոցները,
վորոնց շնորհիվ հնարավոր է կանխել այդ
հիվանդուկթյունները:

Այստեղ առաջ բերված հասարակ կա-
նոնները կիրառելով, աշխատավորները կկա-
րողանան ավելի լավ պահպանել թե՛ իրենց
և թե՛ յերեխաների առողջուկթյունը:

I.
**ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎԱԾ ԳԻԹՆ
ՈՒ ԿՈԿՈՐԴԸ**


Քթի ներսում մի յերկարավուն խողոչ
կա, վոր ծածկված և լորձաթաղանթով և
միջապատով յերկու քանցի՛յ յե բաժան-
ված: Քթի խողոչի արտաքին պատերի վրա
կան մի շարք յեղուտաներ, վորոնք քախե-
ցիներ են կոչվում (նկար 1.): Առջևից
քիթը վերջավորվում և քաժակերով:

Դեմքի վսակորները քթի շրջապատում ամ-
բողջական կտորից չեն. նրանց վրա կան
տարբեր մեծության մի քանի խորշեր: Յեր-
կու մեծ խորշերը գտնվում են ալաների շրջա-
նում, յերկու փոքրերը՝ հոնքերի վերևում,
իսկ մի քանի խորշիկներ ել ձգվում են դեպի
յետ՝ միջին քթախեցու յերկայնությամբ: Այս
բոլոր խորշերն ունեն անցքեր, վորոնք տա-
նում են ուղղակի դեպի քթի խողոչը: Այս-



Նկ. 1. Գլխի յերկախական հատվածը. 1-2—բխա-
խեցիները. 3—Յեփատախյան փողանցքը. 4—յերրորդ
նշագեղձը. (ադենոիդներ). 5—բթի կլանը. 6—վոր-
կորը. 7—շնչափողը

տեղից պարզ և ուրեմն, վոր քթի հիվան-
դության հետևանքով հիվանդանում են նաև
այս խորշերը:



Նկար 2. Սոսորդի նկարը. 1 — լեզվակը, 2, 3, 7 — բժրի կա-
մարները, 4 — նշապեղձը. 5 — կոկորդը, 6 — լեզուն, 8 —
կոշտ բիւրը:

Քթի յետևում տեղավորված և քթի
կլանը, վորի կողքի պատերի վրա դնվում
են Յեվսախյան փողերի յերկու անցքերը:
Այս վերջինները քթի կլանը միացնում են
յերկու ախանջներին: Քթի կլանի յետևի
պատին տեղավորված և յերրորդ նշագեղձը:

Յեթե գդալի ծայրով լեզուն վար սեղ-
մենք ու բերանի միջով նայենք կոկորդին,
կարող ենք տեսնել կակուղ փմֆր (նկար 2.):
Նրանից ներքև կախ ե ընկած լեզվակը, իսկ
կոկորդի յերկու կողքերին յերևում են յերկու
նեազեղձեր:

Յերբ մարդ կուլ ե տալիս կերածը,
կակուղ քիմքը վեր ե բարձրանում և թույլ չի
տալիս, վոր սնունդն ընկնի քթի կլանը և
քիթը: Բերանով շունչ առնելիս կակուղ քիմքը
մնում ե նույն դիրքում: Յերբ մարդ քթով
ե շունչ առնում, կակուղ քիմքը ներքև ե
կախվում ու ազատ անցք բաց անում ողի
հոսանքի առաջ դեպի թոքերը:

Քթի կլանը և բերանը միանում են լեզ-
վակի մոտ. դրանցից ցած գտնվում են երև-
չափողը յեվ կերակրափողը (վորկորը):

Շնչափողը գտնվում ե կերակրափողի առ-
ջեվը ու վզի մաշկի տակ շոշափվում ե վոր-
պես մի կոշտ յելուստ: Կերակրափողը տե-
ղավորված ե շնչափողի յետևում, այս վեր-
ջնի և վորնաշարի միջև:

Բոլոր շնչուղիները, բերանը և կերակ-
րափողը ծածկված են լորձաթաղանթով:
Այս թաղանթն այդպես ե կոչվում, վորով-
հետև նա մշտապես լորձ ե արտաթորում:

ԳԻԹԸ ՎՈՐՊԵՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆ

Շատ կարևոր նշանակութիւն ունի մեր կյանքում քիթը, փորովհետեւ նա զերծ և պահում մեզ բազմաթիւ վտանգներից:

Մեզ շրջապատող ողն իր մեջ պարունակում և մեծաքանակ և բազմատեսակ փոշի: Ֆարքիկներում և գործարաններում փոշին պարունակում և իր մեջ մշակվող նյութեղենների մասնիկները (մետաղափոշի, ամառափոշի, ցեմենտի փոշի և այլն) ու, բացի դրանից, ողում կարող են լինել տարբեր գազեր և ծուխ: Գյուղատնտեսական աշխատանքների և մանավանդ բերքահավաքի ու կալի ժամանակ ողը պարունակում և մեծաքանակ բուսական փոշի:

Ողի հետ միասին մենք ներշնչում ենք նաև փոշի, փոքր մեծապես փռատում և մեր առողջութեանը: Փոշուց բոլորովում և շնչուղիների լորձաթաղանթը, իսկ դա կարող և առաջ բերել թոքերի հիվանդութիւն:

Բացի փոշուց, ողի մեջ կան նաև բազմաթիւ և շատ մանր կենդանի ելակներ, վորոնք միկրոք են կոչվում: Կան այնպիսի միկրոքներ, փորոնք մեր առողջութեան համար չա-

փազանց փնասակար են, վորովհետև նրանք առաջացնում են զանազան հիվանդություններ:

Սակայն ինչո՞ւ մենք, առանց մեր առողջությանը փնասելու, կարողանում ենք ներշնչել այն ողը, վորն իր մեջ շատ փոշի ու միկրոբներ ե պարունակում: Դա հնարավոր ե միայն այն պատճառով, վոր փոշոտ ողն անցնելով քթի խոռոչի վոլորապտույտ անցքերով, թողնում ե այնտեղ փոշու առատ մասնիկներ և միկրոբներ: Բթային լորձուկնքն այս միկրոբներին անփնաս ե դարձնում, վորովհետև նրանք նստում են մշտապես թաց լորձաթաղանթի վրա:

Բացի դրանից, ողը քթի միջով անցնելիս, տաքանում և խոնավ ե դառնում: Այսպես, ուրեմն, ողը քթախոռոչից անցնում ե թոքերի մեջ արդեն վորոշ չափով փռուց յեվ միկրոբներից մաքրված ու բավականաչափ տաքացած և թաց:

Պետք ե միաժամանակ ասել, վոր քիթը մեծ դեր ե խաղում կանոնավոր թոքային շնչառության համար: Շնչառության ժամանակ թոքերում լցված ողն ամբողջապես չի նորոգվում: Բթի միջոցով շնչառությունը հեշտացնում ե թոքերի ողափոխումը և ողապործված ողի թափում ողով փոխարինումը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՇՆՉԵԼ ԱՍՈՂՋ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պետք է ստի որեւ կանոնավոր շունչ առնել, վորովհետեւ դա ոգնում է մեզ պահպանել մեր առողջությունը և շատ հիվանդությունների առաջն է առնում: Բնական և համարվում միայն քայլին ճնշառությունը, վորովհետեւ քիթը գտում է ներշնչած ոգը ամեն տեսակ փաստակար մասնիկներից:

Յերբեմն պատահում է, վոր քթային շնչառությունը դժվարանում է և այն ժամանակ մարդս ստիպված է լինում բերանով շունչ առնել: Դա ցույց է տալիս, վոր քիթ մեջ կամ քիթ կլանում կան վորոշ թերություններ, վորոնք պետք ունեն բժշկության և բժշկի ոգնության:

Բերանով շնչելիս շնչողիներէ և թոքերի մեջ անմիջականորեն մտնում է պաղ և չոր ոգը, վոր զանազան տեսակի փոշի յե պարունակում իր մեջ: Շնչողիներէ լորձաթաղանթը միշտ պաղ է առնում, նրա վրա նստող փոշին թաղանթի վրա դրդիւ և առաջ բերում և զանազան միկրոբներ խորն են թափան-

ցում: Այս բոլորը կարող եւ առաջացնել ամեն տեսակ հիվանդութիւններ:

Յեթե, որինակի համար, վերցնենք հիվանդներին, ապա կտեսնենք, վոր նրանցից շատերը բերանով են շունչ առնում, իսկ այդպէս շունչ առնելիս նրանք հեշտությամբ կարող եյին վարակվել տուբերկուլյոզով:

Նույնը կարելի յեւ ասել նաեւ ուրիշ հիվանդութիւններով վարակվելու մասին: Ամենքի համար հասկանալի յեւ, վոր բերանով շունչ առնելիս ավելի շուտ կարելի յեւ հիվանդանալ, քան թե քթով շնչելիս, վորը հանդիսանում եւ վորպէս պաշտպանողական ապարատ:

Փոշոտ արտադրութիւններէ բանվորներէ միջեւ ավելի հաճախ հիվանդանում են նրանք, վորոնց քիթն այս կամ այն պակասութիւնն ունի, վորը դժվարացնում եւ քթով շնչառութիւնը և ստիպում եւ բերանով շնչել:

Պետք եւ նաեւ իմանալ, վոր քթով յերկարատեւ ծանր շնչառութիւնը հաճախակի առաջ եւ բերում գլխացավ, իսկ յերբեմն նաեւ հիշողության թուլութիւն:

Փոքր յերեխաները, վո՞րոնք չեն կարողանում քթով շնչել, շատ Ը ավելի յեն մնասվում, վորովհետեւ դրանով խանգարվում եւ մանկան կանոնավոր զարգացումը:

Դպրոցում աղբյուրի մանուկներն ուսման մեջ յեա են մնում իրենց ընկերներից և նույն իսկ արտաքին տեսքով ել նրանք նման են քիչ զարգացած ու ցրված յերեխաների։ Այնինչ դա հետևանք և այն բանի, վոր քթով շունչ առնելու դժվարությունը սովորաբար պակասեցնում և լսողությունը, և հետևաբար յերեխաները չեն կարող ուշադրությամբ պարապել։

Այս տեսակ յերեխաների քունը վատ և վնասում ու անհանդիստ նրանք հաճախակի տանջվում են գիշերային վախից, իսկ յերեմն ել գիշերները մեղր պահել չկարողանալուց։ Զարմանալի չե, վոր առավոտները, քնից հետո անմիջապես, աղբյուրի յերեխաները հիվանդ են զգում իրենց և թույլ։ Սրա հետ միասին քթով վատ շնչող մանուկներն ունենում են մարսողության խանգարում, վոր նույնպես անդրադառնում և նրանց առողջության վրա։

Ով մանուկ հասակից սկսած շունչ և առնում բերանով, նրա կրծքի վանդակն ու թոքերը ազատ չեն զարգանում։ Բացի սրանից, քթով վատ շնչող մանուկները հաճախակի ունենում են ականջի հիվանդություն և լսողության թուլություն։

Վերջապես անհրաժեշտ և իմանալ, վոր
այն մանուկները, վորոնք ստիպված են միշտ
բերանով շնչել, շնչուղիները պաղեցնելու շնոր-
հիվ հեշտությամբ հիվանդանում են կոկորդի
հիվանդությամբ:

Ինչ վերաբերվում է ծծկեր յերեխաներին,
նրանց նույնիսկ քթի կարճատև ծանր շնչա-
ռությունը կարող է վատ ազդել նրանց ա-
ռողջության վրա: Ծիծ ուտելու ժամանակ
յերեխաները միայն քթով են շունչ քաշում:
Գթի մեջ յեղած ամեն թերություն խախ-
տում է մանկան քթային շնչառությունը և
դժվարացնում է ծիծ ուտելը: Դրանից մա-
նուկն սկսում է սոված մնալ ու նիհարել:

Ինչն է քթով շունչ առնելու դժվարու-
թյան պատճառը:

Յերեխաների մոտ դա ամենից հաճախ
պատահում է քթի կլանի մակաճից (нарост),
վոր կոչվում է ադենոիդ:

Յերբեմն ել քթով շունչ առնելուն դժվա-
րացնում են քմքի նշագեղձերը, վորոնք յեր-
բեմն ահագին մեծություն են ունենում:
Մեծերի մոտ քթի շնչառությունն ամենից
հաճախ դժվարանում է քթի միջապատի ծռ-
վելուց, քթի խխունջների մեծանալուց կամ
քթի մեջ պոլիպներ գոյանալուց:

ԳՐԻՊՊ ՅԵՎ ԱՆԳԻՆԱ

Շնչուդու հիվանդություններից հատուկ ուշադրութեան արժանի յեն գրիպպը յեվ անգիւնան, վորոնք չափազանց շատ են տարածված: Յեթե դրան ավելացնենք և այն, վոր գրիպպն ու անգիւնան հաճախ ունենում են ծանր հետեւականքներ, այն ժամանակ հասկանալի կլինի այն մեծ նշանակութիւնը, վոր ունեն նրանք աշխատավորների կյանքում:

Գրիպպը լավ ծանոթ է ամենքին: Ո՞վ մեղանից չի հիվանդացել գրիպպով, վորն առաջացնում է ճենդային դուրքյուն, հաբբուխ, հագ, գլխացավ յեվ ընդհանուր տկարութիւն:

Շատերը կարծում են, վոր գրիպպը մըրսելու, պաղ առնելու հետեւանք է: Ճիշտ է, շատ հաճախ գրիպպը յերևում է մարմնի ընդհանուր պաղ առնելուց հետո, ինչպես որինակ՝ շատ տաք կացարանից անմիջապես շատ պաղ կացարան տեղափոխվելիս: Գրիպպն առաջանում է նմանապես, յերբ վտարերդ թըջվում են և յենթակա յես լինում սուր միջանցիկ քամիների:

Բայց իրականում գրիպպ առաջացնողը վորոշ տեսակի վարակիչ միկրոբներն են,

վորոնք մի մարդուց մյուսին են փոխադր-
վում: Գրիպպով հիվանդը միշտ կարող է
վարակել իրեն շրջապատող առողջ մարդկանց:

Գրիպպից առողջացածներն ել դեռ յեր-
կար ժամանակ իրենց քթում և կոկորդում
գրիպպի միկրոբներ են կրում և կարող են
վարակել առողջներին:

Իսկ ցրտառության հետեւանքն այն է,
վոր սրգանիզմը՝ թուլանում է, հետևաբար
և գրիպպի վարակը, վոր արդեն մտել է շնչու-
ղին, ավելի արագ կարող է զարգանալ այնտեղ:

Գրիպպը վտանգավոր է նրանով, վոր նա
«չի խնայում» վնչ մի որդան, մարդկային
որգանիզմի և՛ վոչ մի նույն իսկ ամենա-
ապահով տեղը»: Հազվադեպ չէ, վոր գրիպպի
ժամանակ առաջանում է նաև ախանջներ
թարախային բորբոքում:

Անգինան նույնպես վարակիչ հիվան-
դություն է, վոր փոխանցվում է մեկ մար-
դուց մյուսին: Անգինայով, ինչպես և գրիպ-
պով, ավելի հաճախ հիվանդանում են մրսելու
հետևանքով, վորովհետև պաղ առնելով մեր
որգանիզմը թուլանում է:

Անգինան կոկորդի հիվանդություն է,
վորովհետև անգինայով ամենից առաջ հի-
վանդանում են նշագեղձերը: Բայց անգինան

անպատճառ առաջացնում և ճեղղային դու-
րյուն, բնզմանութ քուլություն, իսկ համախ
նայել գլխացավ:

Պետք է իմանալ, Վոր վարակիչ մի շարք
հիվանդություններ, ինչպես դիֆտերիան,
բուլեշք և գրիպոլը, իրենց սկզբնավորու-
թյամբ (կոկորդի ցավ, տաքություն) ան-
զինաչին են նման: Դրա համար է, Վոր մի ան-
գամից կարելի չէ և չճանաչել Շատ կարեվեր
և, առանց ժամանակ կորցնելու, ճանաչել դիֆ-
տերիան, Վորպեսզի անմիջապես պատվա-
տումը կատարվի և կարելի լինի կանխել
վտանգավոր բարդությունների զարգացումը:

Ահա թե ինչու կոկորդի ամեն տեսակ
հիվանդությունների ժամանակ ել հիվան-
դիտ պետք է ցույց տալ բժիշկին: Ինչ վե-
րաբերվում է փոքր յերեխաներին—ինչ հի-
վանդություն էլ Վոր նրանք ունենան, ան-
հրաժեշտ է դիտել նրանց կոկորդը, Վորով-
հետև նրանք սովորաբար կուլ տալու ժա-
մանակ ցավ զգալու մասին չեն գանգա-
վում: Կոկորդը չնայելու դեպքում, կարելի
չէ սխալվել, անդինտան աչքաթող անել:

Անդինտան պետք է համարենք լուրջ նի-
վանդություն, Վորովհետև նրանից կարող են
առաջանալ զանազան բարդություններ:

Վորոշ պայմաններում անգլիան կարող
է թաքուն ձևի վերածվել։ Այս գեպքում
հիվանդը յերբեմն չի յեւ յենթադրում, վոր
իր նշագեղձերը հիվանդ են, այնինչ նրանք
աննկատելի կերպով կարող են սրտի, յերիկա-
մունքի և արյան հիվանդություն առաջացնել։

Պետք է իմանալ, վոր հոգերի ռեվմատիզմը
շատ անգամ առաջանում է նշագեղձերի
հիվանդությունից, թեև հիվանդը շատ ան-
գամ վոչ մի ցավ չի զգում կոկորդում։

Անգլիան յերբեմն շատ յերկար է տե-
վում։ Հիվանդն ամեն որ ունենում է փոքր
տաքություն, վոր շարունակվում է շաբաթ-
ներ և նույնիսկ ամիսներ։ Հիվանդն արագ
թուլանում է, զգում է գլխացավ, յերբեմն
եւ ունենում է սրտի բաբախում։ Բացի
սրանից, այսպիսի հիվանդները զարմանալի
հեշտությամբ և արագությամբ յենթարկ-
վում են ցրտառության։

Չպետք է մոռանալ, վոր գրիպպը և ան-
գլիան լազ հաճախ հարվածում են նրանց,
վորոնց քիթը կամ կոկորդը մի ինչ վոր
պակասություն ունեն և չեն թողնում քիթով
ազատ շունչ քաշել։

Բացի դրանից, մենք այժմ լավ գիտենք,
վոր հիշյալ հիվանդությունները վարակման

միջոցով հիվանդներին առողջներին են փոխանցվում: Մեզ նմանապես հայտնի չե, վոր անգլինայի վարակը շատ յերկար ժամանակ կարող ե ծածուկ մնալ նշանագեղձերում ե վոչ մի ցավ չառաջացնել կոկորդում:

Մենք ներկայումս հաստատ գիտենք, վոր ցրտառությունն ինքնին անգլինա կամ զրիպպ չի կարող առաջացնել, բայց թուլացնում ե մեր որզանիզմը ե ցրտառության հետեւանքով մարդն ավելի հեշտությամբ ե վարակվում այդ հիվանդություններով:


Այս գրքի 39 — 41 յերեաներում առաջ են բերված պարզ ե ամենքին մատչելի կանոններ: Ստիվ պահպանեցեք այդ կանոնները ե այն ժամանակ դուք կամրացնեք ձեր որզանիզմը՝ զրիպպի ե անգլինայի վարակիչ միկրոբների դեմ պայքարելու համար ու կապահովեք ձեզ վարակվելուց:

V.

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎԱԾ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆԸ

Մեր լսողական ապարատը յերեք մասեր ունի—արտաքին ախանջ, միջին ախանջ ե ներքին ախանջ (նկար 3):

Արտաքին ականջը բաղկացած է ականջի խեցուց և արտաքին լսելու անցքից: Արտաքին ականջը ծառայում է հնչյունները միջին ականջին հաղորդելու համար:



Նկար 3. Հստկության որգանը. 1—ականջի խեցին, 2—լսելու անցքը, 3—թմբկաթաղանթը, 4—մրճիկը, 5—սալը, 6—աստանտակը, 7—միջին ականջը, 8—Յեվստախյան խողովակը, 9—խխունջը և կիսաբոլորային կանալները:

Լսելու անցքի պատերը ծածկված են ականջածծմբով, վորն անհրաժեշտ է լսելու անցքը պատող մաշկի պաշպանության համար:

Միջին ականջն արտաքինից բաժանվում է թմբկաթաղանթով: Նա շատ նուրբ է ու թափանցիկ և միացված է լսողական փոք-

րիկ վոսկրին, վոր կոչվում է մրնիկ: Իր հերթին մրնիկն ել շարժական հողերի միջոցով միացված է սալին յեվ ասպանսակին: Այս լերեք վոսկրիկներն ել լսողական են կոչվում:

Միջին ականջը Յեվասախյան խողովակի միջոցով հաղորդակցություն ունի քթի կլանի հետ: Ամենքին հայտնի յե, վոր ուժգին խընջելիս ականջում մի ճայթյուն է լսվում, կարծես ականջին մի հարված հասցրած լինես:

Միջին ականջը լցված է ուղով, վորը Յեվասախյան խողովակի միջով մտնում է քթից: Իսկ Յեվասախյան խողովակը կուլ տալու յուրաքանչյուր շարժողության ժամանակ, միշտ բացվում է:

Արտաքին և միջին ականջները ծառայում են միայն հնչյունները ներքին ականջին հաղորդելու համար, վորը մեր լսողության որգանի գլխավոր մասն է կազմում:

Ներքին ականջը լաբիրինթոս է կոչվում և չափազանց բարդ կազմվածք ունի: Նրանում վորոշում են հետևյալ մասերը՝ խըխունջը յեվ յերեմ հաս կիսակամարածեվ կանալներ: Թե խխունջը և թե կիսակամարածե կանալները լցված են հատուկ հե-

դուկով: Խիսնջում տեղավորված է նյարդա-
յին մի հատուկ ապարատ—կորսյան ու-
գանը, վորտեղից դուրս է գալիս լսողու-
թյան ներվը և հասնում է ուղեղի կենտ-
րոնին:

Ձայներն ալիքաձև թափանցում են ա-
կանջը լսելու արտաքին անցքի միջով: Դրա-
նից տատանում է առաջ գալիս թմբկաթա-
ղանթի վրա: Դրա հետ միաժամանակ շար-
ժողության մեջ են դրվում թաղանթի հետ
կապված լսողական վոսկրիկները: Լաբիրին-
թոսի մեջ յեղած հեղուկը սկսում է տա-
տանվել և գրգիռ է առաջ բերում Կորսյան
որգանում: Այնուհետև այս տատանումները
լսողության նյարդերով հաղորդվում են մեր
ուղեղային կենտրոններին, ու մենք զգում
ենք վորոշ ձայն և աղմուկ:

Այժմ մենք տեսնում ենք, վոր լսելու
համար մեզ հարկավոր են և՛ արտաքին, և՛
միջին, և՛ ներքին ականջը: Յեվ դրա համար
նրանցից վորն էլ հիվանդանա, կարող է
թուլացնել մեր լսողության աստիճանը:

Բայց շատ վտանգավոր է ներքին ականջի
բորբոքումը, վորովհետև նա կարող է կա-
տարյալ խլություն առաջացնել, վորը հա-
ճախ անկարելի յե լինում բժշկել:

Ներքին ականջի կիսաբոլորակ խողովակ-
ներում գետեղված և հավասարակշռության
ապարհաք: Այս ապարատի շնորհիվ մարդս
կարողանում և ազատորեն շարժվել, փոխել
իր մարմնի դիրքը և հավասարակշռություն
պահպանել:

Կիսաբոլորակ խողովակների յուրաքան-
չյուր հիվանդությունը և խանգարմունքը
նախ և առաջ չափազանց դժվարացնում են
շարժումները: Այսպիսի հիվանդներն ունե-
նում են զլխապտույտ, նրանց քայլվածքը
դառնում և անկայուն ու յերերուն: Նրանք
հաճախ կորցնում են իրենց հավասարակշ-
ռությունը և վայր են ընկնում: Կան և այն-
պիսի դեպքեր, յերբ նման հիվանդներն առ-
հասարակ չեն կարողանում տեղից-տեղ
շարժվել և հարկադրված են անկողին
պստկել:

VІ.

ԻՆՉԻՑ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԱԿԱՆՋՆԵՐԸ

Մեր լսողության ապարատը կանոնավոր
կերպով և հատակորեն աշխատել կարող և
միայն այն դեպքում, յեթե նրա բոլոր մա-
սերն ել լիովին առողջ են ու սարքին:

Ամենից առաջ անհրաժեշտ է, վոր լսելու արտաքին անցքը միանգամայն բաց լինի ձայն ընդունելու համար: Յեթե նա փակված է ծծմբային խցանով, կողմնակի առարկայով, ուռեցքով կամ պալարով, ապա ուրեմն անխուսափելի յե լսողության այս կամ այն չափով թուլացումը:

Լսողության հստակությունը կախված է նաև թմբկաթաղանթի դրությունից: Թմբկաթաղանթի հաստանալը, նրա կրով ծածկվելը, ճեղքերի ու սպիւնների գոյանալը կարող է ազդել լսողության ընդունակության վրա: Սակայն չպետք է գերազնահատել թմբկաթաղանթի նանակությունը լսողության համար: Թմբկաթաղանթը, լսելու վուկրիկների հետ միացած, ձայնական տատանումներն է միայն հաղորդում լաբիրինթոսին, հետևաբար և լսողության որգանի աշխատանքի համար Նմեծնշանակություն հունի: Դրա համար ել, յեթե թմբկաթաղանթը ծակված լինի կամ նույնիսկ բոլորովին փռաված, այդ ամեննին չի նշանակում, վոր ահանջը կխլանա: Մյուս կողմից, կան մի շարք հիվանդություններ, յերբ թմբկաթաղանթը բոլորովին առողջ է, այնինչ լսողության աստիճանը շատ է ընկած:

Նորմալ լսողութեան համար անհրաժեշտ
է, փորպեսպի լսելու փոսկրիկներն ազատու-
րեն շարժվեն ձայնական տատանումների
ժամանակ։ Այս փոսկրիկների շարժումու-
թեան փորեւ խանգարում անխուսափելիո-
րեն առաջացնում է այս կամ այն աստի-
ճանի խլութեան։

Լսողութեան համար մեծ նշանակութեան
ունի Յեվստախյան խողովակը, փոր միաց-
նում է ականջը քթի կլանի հետ։ Կուլ տա-
լու սոմեն մի շարժողութեան ժամանակ այդ
խողովակից ողն անցնում է միջին ականջը։
Յեվստախյան խողովակի աշխատանքի այս
կամ այն խանգարումն անհրաժեշտորեն անդ-
րադառնում է լսողութեան սրութեան վրա։

Յեթե թարմ ողն անկարող է թափան-
ցել միջին ականջը, ապա արտաքին ողի
ճնշումից դժվարանում է թմբկաթաղանթի
և լսողական փոսկրիկների տատանումը, փորը
նվազեցնում է լսողութեան սրութեանը։ Լսո-
ղութեան այսպիսի խանգարումը տեղի լս-
ունենում հարբուխի ժամանակ կամ յեթե
հիվանդացել է քթի կլանը, փորով հետեւ այդ
ժամանակ քթով շունչ առնելը դժվարանում
է։ Իսկ յեթե Յեվստախյան խողովակի աշ-
խատանքը խանգարող պատճառները մնա-

յուն ընույթ են կրում, ինչպես այդ լինում
ե աղենոիդներ ունեցող մանուկների մոտ,
կարող ե առաջանալ համառ խլություն:

Մանավանդ ուժեղ կերպով խախտում ե
լսողական ապարատի նորմալ աշխատանքը
սիջիմ ախանջի քարախոտ բորբոխումը, վորը
վոչ միայն լսողությանն ե սպառնում, այլ
յերբեմն նաև հիվանդի կյանքին:

Ինչպես ե լինում, վոր թարախակալման
գրգռիչներն ընկնում են միջին ականջը:

Ինչպես մեզ արդեն հայտնի յե, միջին
ականջն անցնել կարելի յե Յեվստախյան
խողովակով և արտաքին լսողական անցքով,
յեթե փասվել ե թմբկաթաղանթը: Ահա այս
յերկու ուղիներով են թափանցում միջին
ականջը թարախային միկրոբները: Դրա հե-
տևանքով զարգանում ե միջին ականջի
թարախոտ բորբոքումը, վորն, աննպաստ
պայմաններում, կարող ե հարատեվ ընույթ
ստանալ: Այս վիճակում հիվանդի լսելու
անցքից թարախ ե ծորում և հաճախ հիվանդ-
ները կարծում են, թե անփնաս գեղձախտով
են հիվանդ: Մինչդեռ այդ բորբոքումն աս-
տիճանաբար քայքայում ե ականջի վոսկրա-
յին պատերը, վորով որեցոր պակասում ե
լսողական ընդունակությունը: Լինում են

դեպքեր, յերբ առաջանում և ուղեղի թա-
ղանթների կյանքին սպառնացող բորբոքում,
ինչպես նաև ուղեղի պալար և արյան վա-
րակում:

Սմենից հաճախ միջին ականջի թարա-
խոտ բորբոքումը զարգանում և վորպես
զրիպպ, քուլթեշ, դիֆտերիա, տիֆ հիվան-
դությունների բարդություն, յերբեմն ել
նույնիսկ իբրև հասարակ հարբուխի բար-
դություն:

Յերբեմն ականջի բորբոքումն առաջա-
նում և չափազանց ուժեղ խնջելուց, յեթե
քթի լորձուկքը թարախային միկրոբների
հետ Յեփստախյան խողովակի միջով ընկ-
նում և միջին ականջը:

Վերջապես, ականջը կարող և թարախա-
կալել թմրկաթաղանթի այս կամ այն կերպ
վնասված լինելու դեպքում: Թմրկաթաղանթը
կարող և պատուվել թնդանոթաձգությու-
նից, ականջին հարված հասնելուց, արա-
դությամբ զառիվեր բարձրանալուց, յեր-
բեմն ել նույնիսկ ականջը ծծելով համբու-
րելուց:

Ականջի համար մեծ վտանգ են ներկայաց-
նում նաև զանազան առարկաներ (բալի
կորիզ, ձմերուկի կուտ, արեածաղկի կուտ

և այլն), վոր հաճախ, խաղի ժամանակ մա-
նուկները սովորութիւն ունեն խոթել լսե-
լու անցքը: Բայց թմբկաթաղանթի խեղումն
առաջացնողները վոչ այնքան այդ առար-
կաներն են, վորքան նրանց հեռացնելու հա-
մար գործ դրված անշնորհք և շտապ վոր-
ձերը: Յեղել են դեպքեր, յերբ այդպիսով
քայքայել են վոչ միայն ամբողջ ականջն,
այլ և այնքան խորապես են նրան վիրավո-
րել, վոր վերջացել է հիվանդի մահով:

Մեր լսողական ընդունակութիւնն ամե-
նից ավելի կախում ունի ներքին ականջի
դրութիւնից: Ձայնական առատանումները հա-
ղորդելու համար ամենից առաջ պետք է ու-
նենալ առողջ լսողական նյարդ: Այդ նյարդի
յուրաքանչյուր խանգարումն անխուսափե-
լիորեն առաջացնում է այս կամ այն աս-
տիճանի խլութիւն:

Այսպիսի դեպքեր պատահում են պատե-
րագմների ժամանակ, յերբ պայթող ուռմբը
շժմեցնում է մարդուն, խանգարելով միայն
նրա լսողական նյարդի գործունեյութիւնը,
իսկ միջին ականջը կարող է մնալ բոլորո-
վին առողջ: Հայտնի յե նույնպես, վոր վո-
րոշ հիվանդութիւնների ժամանակ, ինչպես
մենինգիտն է և քութեշը, նմանապես և վո-

բոշ թունափորումների գնալքում (մկնդեղով,
արննով և ֆոսֆորով), մարդ կարող և բու-
յրովին խլանալ լսողական նյարդի կրած
փոփոխումներից, թեև միջին ախանջը մնում
և առողջ:

Լսողական ապարատի բոլոր մասերից
հաճախագույն հիվանդացողը միջին ախանջն
և և ամենաթիչը՝ ներքին ախանջը:

VII.

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ԸՆՉՈՒՂԻՆԵՐԻ ՅԵՎ ԼՍՈՂԱԿԱՆ ՈՐԳԱՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Հիվանդանալուց բաղմաթիվ դեպքերում
գերծ մնալու համար հարկավոր և քրով շրմ-
ջի, վորը պաշտպանում և մեր շնչուղիները
փոշուց, պաղելուց և վարակումից:

Դրա համար անհրաժեշտ և վարժեցնել
մեզ միշտ քրով ճնշելու: Յեթե քթով շնչելն
այս կամ այն պատճառով դժվարանում և,
անհրաժեշտ և բժշկի գիմեր:

Քթով շունչ առնելու դժվարությունը
հատկապես վնասում և աճող մանկան որ-
դանիքմին Պետք և միշտ նկատի ունենալ,
վոր քթի փակ լինելու հեռանքով մանուկ-
ների լսողության աստիճանը փոքրաւփոքր

ընկնում ե: Ահա ինչու մանկան առողջու-
թյան համար շատ կարեւոր ե ժամանակին
ապահովել նրա քի լիակատար անցան-
լիությունը: Այդ նպատակով հաճախ ուղե-
րացիայի յեն դիմում, վորը լավագույն ե
անել կարելիությն չափ շուտ:

Անհրաժեշտ ե միաժամանակ պայքար
մղել վարակիչ ճիւղանդությունների դեմ:
Պետք ե լրջորեն հետեւել, վոր քուլթեշով
կամ դիֆտերիայով հիվանդներն անպատճառ
հիվանդանոց փոխադրվեն:

Անգինան ու գրիպպը նույնպես կարող
են մեկից մյուսին փոխանցվել, թեև սրանք
քուլթեշի և դիֆտերիայի չափ վարակիչ չեն:
Հետևաբար այսպիսի հիվանդները կարող են
տանը բժշկվել, թեև անհրաժեշտ ե, վոր
տանն ել նրանք անջատված լինեն ընտա-
նիքի առողջ անդամներից: Դրա հետ միա-
ժամանակ գրիպպով և անգինայով հիվանդ-
ները պետք ե ունենան առանձին ամանե-
ղեն ուտելու համար և ճերմակեղեն (յերես-
սրբիչ, թաշկինակ և այլն):

Յերբ յերեխան հիվանդանա վարակիչ հի-
վանդությամբ, անհրաժեշտ ե, վոր բժիշկը
ուշադրություն դարձնի նրա ականջի դրու-
թյանը: Դրանով հնարավոր կլինի ժամանակին

վերահասու լինել ականջի հիվանդությանը և
անհապաղ ձեռք առնել բժշկական միջոցները:

Փոքու դեմ պայքարը, ինչպես և մաք-
րության պահպանումը՝ աշխատավորներին
պայմաններում մեծ չափով պաշտպանում և
շնչուղիները բազմառեսակ հիվանդություն-
ներից: Կարեւոր և վոչ միայն խնամք տանել
քնակարանի, զոհատի ու ճերմակեղենի մաք-
րության մասին, այլ և հետեւել մարմնի
մաքրությանը, ժամանակին լողանալ, հաճա-
խակի ձնօճերը լվանալ ու ամեն որ առավ-
ները քաղել:

Որգանիզմը դիմացկունության վարժե-
ցնելն առանձնապես կարեւոր և շնչուղու և
լսողության որդանի հիվանդություններին դեմ
հաջող պայքարելու համար:

Ականջի, կոկորդի և քթի հիվանդության
ամենահաճախակի պատճառներից մեկը ցրը-
տառությունն և, պաղ առնելը:

Մենք այժմ դիտենք, վոր ցրտառու-
թյունն ինքնին հիվանդություն չի առաջաց-
նում, այլ թուլացնում և որդանիզմը և նպաս-
տավոր պայմաններ և ստեղծում հիվանդու-
թյամբ վարակվելու համար:

Ամեն մարդ միատեսակ հեշտությամբ
չի յենթարկվում ցրտառության: Կան մար-

դիկ, վորոնք հենց վոր թեթե կերպով վոտ-
ները թրջեն կամ միջանցիկ քամու մեջ նըս-
տեն, լուրջ կերպով հիվանդանում են: Կան
և այնպիսիները, վորոնք առանց իրենց ա-
ռողջությունը վտանգելու, հեշտությամբ տա-
նում են յերկարատեւ գրտառությունը: Այս
տարբերությունն զգալի չափով կախված է որ-
գանիցմը դիմացկունության վարժեցնելուց:

Զերմաստիճանի շեշտակի փոփոխություն-
ները հեշտությամբ տանել կարողանալու հա-
մար անհրաժեշտ է ամեն որ սառը ջրով
շփել մարմինը և սիստեմատիկաբար դրադ-
վել ֆիզկուլտուրայով: Այսպիսով միշտ կա-
րելի յե գգալի կերպով ամրացնել որգա-
նիզմը և ուժեղացնել նրա դիմադրության
կարողությունը:

Յերբեմն քիմքի նշագեղձերը կամ ատամ-
ները թագուն հիվանդություն են ունենում,
վորը պաղ առնելուն պես կարող է սաստ-
կանալ: Հասկանալի յե, վոր նման դեպքե-
րում անհրաժեշտ է բուժել վերին շնչու-
ղիները ու դրանով վոջնչացնել մշտական
ցրտառության հակումը:

Առողջության համար տարվող պայքա-
րում մեծ նշանակություն ունի նաև շնչուղի-
ների յեվ ականջի կանոնավոր բժեկությունը:

Մենք գիտենք, Վոր կոկորդի հիվանդու-
թյունները կարող են արտի, յերիկամունք-
ների, հոգերի ու արյան ծանր հիվանդու-
թյուններ առաջացնել: Մենք գիտենք, Վոր
տկանջի թարախահոտումը վնասակար է լսե-
լիքի համար, իսկ յերբեմն ել կարող է վտանգ
սպառնալ նաև կյանքին:

Այս բոլորն իմանալով, կոկորդի, քթի
կամ տկանջի հիվանդության յուրաքանչյուր
դեպքում անպատճառ պետք է բժշկի դիմել:

VIII.

ԻՆԶՊԵՍ ՊԵՏԲ Ե ՈԳՆԵԼ ՀԻՎԱՆԴԻՆ ՄԻՆԶԵՎ ԲԺՇԿԻ ԳԱԼԸ

1. Քթի աբյուսնոսությունն ամենից հա-
ճախ հարվածի կամ ընկնելու հետևանք է:
Կան մարդիկ, Վորոնց քթից արյուն է հո-
սում ամենամանշան պատճառներից, ինչպես
որինակ՝ դուխը արևի տակ շատ տաքանա-
լուց, բեռ վերցնելուց, ուժեղ խնջելուց և
այլն:

Պետք է իմանալ, Վոր սովորաբար ար-
յունը հոսում է քթի միջապատի առաջակողմ
մասից, քթանցքից շատ մոտ: Այս իմանա-
լուց հետո շատ դեպքերում հաջողվում է

քթի արյունհոսությունը դադարեցնել տնային միջոցներով: Դրա համար հարկավոր ե այն քթածակը, վորտեղից արյունն ե հոսում, բամբակից պինդ վոլորած գնդակ խոթել ու մատով ամուր սեղմել քթածակը: Բացի դրանից ոգտապետ ե նաև քթին պաղ կոմպրես դնել և նույնիսկ սառույց:

Յեթե արյունը դարձյալ ծորում ե քթի մեջ խոթած բամբակից, այն ժամանակ՝ առաջին բամբակի գնդակը չհանած՝ հարկավոր ե ուրիշ բամբակի գնդակ ևս խոթել քթածակը և լավ սեղմել նրան: Այս միջոցով շատ հաճախ հաջողվում ե քթի արյունհոսությունը դադարեցնել:

Յեթե արյունհոսությունը նորից շարունակվի ու, բացի քթից, բերանից ել արյուն գա, այն ժամանակ անհրաժեշտ ե բժիշկ կանչել:

Քթի միշտ կրկնվող արյունհոսությունը կարոտ ե հատուկ բժշկության:

2. Քրուս զանազան առարկաներ, այսինքն՝ փայտի և ձմերուկի կուտ, ապակյա հուլունքներ, կոճակներ և այլն հաճախակի պատահում են փոքր յերեխաների մոտ:

Պետք ե իմանալ, վոր նման առարկաներն ընկնելով քթի մեջ, վոչ մի վնաս չեն կա-

բող հասցնելու Վտանգավոր Էն այդ առարկաները քթից հանելու անշնորհ փորձերը, փորոնք կարող են արյունհոսություն առաջ բերել կամ քթի մեջ ընկած առարկաներն սովելի խորացնել:

Դրա համար հարկավոր չե, փոր սանցիներն իրենք աշխատեն դուրս հանել այդ բաները: Դա կարող ե անել միայն բժիշկը:

3. Չանագան առարկաներ ականջում, փոր ինքնին նույնպես չեն կարող վնասակար լինել հիվանդին: Անվարժ ձեռքերով այդ առարկաները հանելու համար արված փորձերը կարող են վնասել թմբկաթաղանթին: Դրա համար յերբեք հարկավոր չե, փոր ինքնեղ փորձեր անեք ոտար առարկաներն ականջից հանելու:

Յերբ ականջի մեջ ճանճ ե մտնում կամ փորեն միջատ, փորոնք անտանելի անհանգստություն են պատճառում հիվանդին ու սոսկալի խտտիղ են առաջացնում նրա ականջում, պետք ե ականջի մեջ կաթեցնել մի բանի կաթիլ բուսական յուղ կամ նույնիսկ ջուր. միջատն անպատճառ կվռչնչանա:

Դուրս հանել զանազան առարկաներ ե միջատներ, առանց վնասելու հիվանդին, կարող ե միայն բժիշկը:

4. Զանազան առարկաները կերակրա-
փողով յեմ շնչափողով հաճախ շատ վեժ
վտանգ են ներկայացնում առողջության և
նույնիսկ կյանքի համար:

Ուտելու ժամանակ հաճախ շնչափողով
խրվում ե ձկան փուշ կամ վոսկրի կտոր,
փորոնք այնտեղ մնալով, կարող են վերք
բանալ լորձաթաղանթի վրա, իսկ յերբեմն
եւ ավելի ծանր բարդություններ առաջ
բերել:

Շնչափողն ընկնում են փոքրիկ վոսկրիկ-
ներ, ձմերուկի և արևածաղկի կուտեր և
այլ առարկաներ: Մանավանդ այդ պատա-
հում ե յերեխաների մոտ, փորոնք ուտելու
ժամանակ կարող են կատիկն ընկնել, փորից
բերնի առարկան կամ կերակրի կտորը սլկը-
վում ե շնչափողը:

Յերբ նման առարկաներ ընկնում են կե-
րակրափողը և շնչափողը, հարկավոր չե այս
կամ այն փորձն անել տնային միջոցներով
նրանց դուրս բերելու համար: Զպետք ե
խորհուրդ տալ, ինչպես այդ ընդունված ե,
կլլել հացի չորուկը՝ խրված վոսկրը կամ
փուշը ստամոքսը տանելու համար: Ընդ-
հակառակը, հիվանդը պետք ե սնվի ջրալի և
փափուկ սննդով:

Շնչափողում մի վորեն առարկա մնալիս կարող ե ծանրանալ շնչառությունը և նույնիսկ խեղդամահ անելը Այս բոլոր դեպքերում անհրաժեշտ ե բժշկի ոգնությունը:

5. Ականջի բորբոքումը հաճախ սկսվում ե բոլորովին անսպասելի կերպով և պատճառում ե այնպիսի ուժեղ, ծակող ցավեր, վորոնք միանգամայն հանգստություն չեն տալիս հիվանդին:

Այս դեպքերում ցավը կարելի յե մեղմացնել՝ կաթեցնելով հիվանդ աղանջը մի քանի կաթիլ դու յուղ (քաֆրաձեթ, կարբոլյան ձեթ, արևածաղկի ձեթ): Յուղը կամ ձեթը կաթեցնում են թեյի գդալով կամ աչքի կաթոցիկով. այս գործողությունը կարելի յե որվա մեջ կրկնել մի քանի անգամ:

Հաջող ներդործություն ե ունենում նաև տաքը, վորը գործադրում են տաք ավազի կամ թեփի փաթաթանի ձեփով, այլ կերպ ստած՝ խաշիլ են դնում: Հիվանդ աղանջին դնում են նաև տաք ջրով շիշեր և կոմպրես:

Տնային այսպիսի բուժումը շատ անգամ հանգստացնում ե հիվանդի ցավերը և պահասեցնում աղանջի բորբոքումը:

Բայց հենց վոր հնաբավոր լինի, հիվանդ աղանջը պետք ե ցույց տալ բժշկին:

6. Անգիւնան յել գրիպար շատ անգամ սկսվում են կոկորդի ցավով՝ կուշ տալու ժամանակ և տենդով:

Զպետք է մոռանալ, վոր այսպիսի դեպքերում կոկորդն անհրաժեշտ է բժշկի ցույց տալ, վորպեսզի ժամանակին դեֆտերիայի առաջն առնվի:

Մինչև բժշկի գալը կարելի յե հիվանդի դրուժյունը թեթևացնել այսպես: Նախ և առաջ հիվանդին պետք է անկողին պառկեցնել: Լավ կլինի, յեթե վիզը տաքացնող կոմպրես տրվի: Դրա համար վերցնում են քառածալ մի կտորեղեն թրջում են ջրով, ապա լավ քամում են ու դնում վզին: Թաց լաթի վրա դրվում է թուղթ (հատուկ կոմպրես, իսկ չեղած դեպքում — հասարակ թուղթ): Սրանից հետո վիզը փաթաթում են տաք շարֆով կամ բամբակով, և ամուր կապում: Կոմպրեսը փոխում են 6 ժամից հետո:

Ոգտավետ է նաև հիվանդ կոկորդը վողողել սովորական կերակրի աղի գոլ լուծույթով ($\frac{1}{4}$ թեյի գդալին մեկ բաժակ ջուր), կամ բորակաթթվի լուծույթով (1 թեյի գդալին մեկ բաժակ ջուր):

Բացի դրանից, հիվանդին անհրաժեշտ է վորքան կարելի յե շատ տալ գոլ ըմպելիք,

տյտնեքն թեյ կամ կաթ: Հիվանդի գլուխը
ցավելիս, նակատին ոգտակար ե ղնել սառը
ջրի մեջ թաթախած քառածալ թաշկինակ:
Արանով ել հենց վերջանում ե տնային բու-
ժումը: Մնացած ցուցմունքներն անում ե
բժիշկը:

IX.

ՍՈՎՈՐԵՅԵՔ ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ

1. Միշտ բթով շնչեցեք: Բերանով շունչ
բաշելը մնասում ե ամբողջ որդանիզմին ե
խելիքին: Յեթե բթով շնչելը ծանր ե, դի-
մեցեք բժշկին:

2. Խնջելիս, սեղմեցեք բթածակերդ փոխ-
առափոխ ե վոչ յերկուսը միասին, վորպեսզի
ականջի հիվանդություն չառաջանա:

3. Քիթը ջրով վողողել պետք չե, վո-
րովհետե զրանից կարող ե ականջի հիվան-
դություն առաջանալ:

4. Մի մոռանաք, վոր զանազան առար-
կաներով ականջ փորելը վտանգավոր ե:

5. Ականջը բամբակ մի խցեք. դա ցրտա-
սությունից զերծ չի պահում ե կարող ե
միայն ականջածծմբի ավելորդ կուտակում
առաջ բերել:

6. Մի մոռանաք, վոր ականջին և գլխին խփելով հաճախ խլուլթյուն ե առաջանում:

7. Մի գործածեք վոգելից խմիչքներ և մի ծխեք: Ալկոհոլն ու ծխախոտը վտանգավոր են շնչուղիների և լսողական որգանի համար:

8. Քուլթեշով և դեֆտերիայով հիվանդին անհրաժեշտ ե հիվանդանոց տեղավորել:

9. Ամեն տեսակ սուր-վարակիչ հիվանդությունների ժամանակ անհրաժեշտ ե հետեւել ականջներին:

10. Մի հազաք և մի փոնգտաք ուրիշի յերեսին, վորովհետեւ թուրը վարակված լինելով կարող ե առաջ բերել գրիպի, տուբերկուլյոզի և այլ հիվանդություններ:

11. Պայքարեցեք փոշու դեմ: Մի մոռանաք, վոր փոշին ամենից շատ ե առաջացնում շնչուղիների հիվանդություն:

12. Ուտելուց առաջ ձեռներդ լվացեք՝ վարակը կարող ե փոխադրվել կեղտոտ ձեռների միջոցով:

13. Հիվանդների խորխը շատ անգամ վարակ ե պարունակում իր մեջ: Մի թքեք հատակին և ուրիշներին ել թույլ մի տաք հատակին թքելու:

14. Ատամների հիվանդութիւնը կարող
և պատճառ լինել մի շարք հիվանդութիւն-
ների։ Ամեն որ պետք և ատամները մաքրել,
մանավանդ ուտելուց հետո։

15. Թարախահոտութիւն ականջներից վտան-
գավոր և լսելիքի և կյանքի համար։ Բժշկե-
ցեք հիվանդ ականջները։

16. Յերբ ականջի մեջ ընկնեն զանա-
զան առարկաներ, անմիջապէս բժշկի դիմե-
ցեք, մի փորձեք ինքնեւոր հանել նրանց։

17. Հետեւեցեք, փոր ծծկեր յերեխային
լողացնելիս ջուրը նրա ականջը չլցվի։ Դրա-
նից կարող և ականջները հիվանդալու։

19. Զբաղվեցեք ֆիզիկուլտուրայով, կո-
փեցեք — ամրացրեք ձեր մարմինը, դար-
ցրեք նրան դիմացելուն, այն ժամանակ դուք
չեք վախենալ ցրտառութիւնից։

19. Ամեն անգամ, յերբ կոկորդի հի-
վանդութիւն ունենաք, բժշկի դիմեցեք։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակից	3
I. Ինչպես ե կազմված քիթն ու կոկորդը	5
II. Քիթը վորպես առողջության պահապան	9
III. Ինչպես պետք ե շունչ առնել առողջ լինելու համար	13
IV. Գրիպա և անգինա	15
V. Ինչպես ե կազմված լսողության գործարանը	19
VI. Ինչից են հիվանդանում ականջները	23
VII. Ինչպես կանխել շնչուղիների և լսողության գործարանի հիվանդությունները	29
VIII. Հիվանդին ոգնելը մինչև բժշկի գալը	33
IX. Սովորեցեք առողջ կյանքի	39



Огв. ред Г. А. Потенц

Тех. ред. О. Тер-Давыдов

Сдан набор 27/III-1934 г.
Издан. 204/3782
Статформат А6 105x148
Уполкрайлит № Б—351

Подписано в печ. 10/IV 1934г.
Об'ем 1 1/4 печ. листа.
Заказ 1708
Тираж 1000 экз.

Типография им. „Стачки 1902 года“ АЧПТ в г. Ростове на Дону

գլխ. Հիմնարար գիտ. գրադ.



FL0039850

Գին
Цена

30

Կոպ.
Коп.

12082

A $\frac{I}{4687}$

На армянском языке

Профессор Д. И. Зимонт

БОЛЕЗНИ УХА, ГОРЛА и НОСА

**АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО**

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ

ՈՒՍՏՈՎ-ԴՈՆ ՄԱՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 58

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)